ԴԻՍԿՈՒՍԻԱՆԵՐ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը վերջին ամիսների ընթացքում կազմակերպեց չորս դիսկուսիա, նվիրված 18–19-րդ դարերի հայ հասարակական հոսանքների գնահատման հարցերին և այդ ուղղությամբ սովետահայ պատմագրության ու գրականագիտության ընագավառում եղած սխալների բացահայտմանը։

Առաջին դիսկուսիան նվիրված էր հետևյալ հարցին. «Հասարակական–քաղաքական հոսանքները 18–րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբների հայ ազատագրական շարժման մեջ»։ Այդ հարցի մասին զեկուցեց պրոֆ. Ար. Հովհաննիսյանը։

Հայտնի է, որ մինչև վերջին շրջանում սովետահայ պատմագրության մեջ քաղաքական լուրջ սխալներ էին թույլ արվել, մեթոդոլոգիական անընդունելի տեսակետներ էին արտահայտվել 18-րդ դարի ազատագրական շարժումների և այդ շարժումների նկատմամբ հասարակական հոսանքների ունեցած վերաբերմունքի գնահատման գործում։ Որոշ պատմաբաններ իրենց աշխատություններում, հետևելով իդեալիստական նացիոնալիստական պատմագրության կոնցեպցիաներին, անտեսելով 18-րդ դարի հայ հասարակական կյանքում գոյություն ունեցող հակամարտությունները, ազատագրական շարժումները ներկայացնում էին կտրված դասակարգային պայքարից, ներկայացնում էին որպես միասնական համաժողովրդական շարժումներ։ Այդ պատմաբանները, չկարողանալով առանձին անհատների գործունեության ետևում տեսնել նրանց դասակարգային հենարանը, փորձում էին ազատագրական շարժման դեմ գուրս եկող մարդկանց գործունեությունը բացատրել նրանց անհատական ձգտումներով, այսինքն, հասարակական հարաբերությունները բացատրում էին նույն կղերա–պահպանողական–իդեալիստական գաղափարախոսության դիրքերից, գաղափարախոսություն, որով բացատրված է հայ ժողովրդի հին շրջանի ամբողջ պատմությունը կղերա–աղդային պատմագրության կողմից։ Հակագիտական այդ կոնցեպցիայի արտահայտությունները նկատելի են պրոֆ. պրոֆ. Ար. Հովհաննիսյանի, Վ. Պարսամյանի, Մ. Ներսիսյանի և ուրիշների աշխատություններում։

Մյուս կողմից, որոշ պատմաբաններ գերագնահատելով բուրժուազիայի դերը 18–րդ դարի ազատագրական շարժումների գործում, նրան վերագրում էին ժողովրդա–դեմոկրատական գաղափարներ և պրակտիկ գործունեություն։ Այդ բանը արտահայտվել է հատկապես Հնդկաստանում Շ. Շահամիրյանի գլխավորած խմբակի, այսպես կոչված Մադրասի խմբակի գործունեության գնահատման մեջ։ Պրոֆ. Վ. Պարսամյանն իր աշխատություններում Մադրասի խմբակին վերագրել է դեմոկրատական ռեսպուբլիկայի ստեղծման ձգտում, իսկ պրոֆ. Մ. Ներսիսյանը, անվերապահորեն Մադրասի խմբակի հրատարակություններից մեկը՝ «Նոր տետրակ»-ը համարել է «հայ պատրիոտիզմի լավագույն մանիֆեստներից մեկը», առանց ցույց տալու այդ պատրիոտիզմի բուրժուա–նացիոնալիստական էությունը։

Պրոֆ. Ար. Հովհաննիսյանի զեկուցումից հետո բացված մաքերի փոխանակությանը մասնակցեցին ընկ. ընկ. Վ. Պարսամյանը, Գր. Գրիգորյանը, Ա. Միրզոյանը, Հ. Ժամկոչյանը, Լ. Բարայանը. Վ. Ոսկանյանը, Ա. Աբրահամյանը, Մ. Ներսիսյանը։

Դիսկուսիան պարզություն մտցրեց 18-րդ դարի հայ հասարակական հոսանքների գնահատման հետ կապված մի շարք հարցերում։ Զեկուցող ընկ. Ար. Հովհաննիսյանը և ելույթ ունեցողները արխիվային ու տպագիր փաստերով ցույց տվեցին, թե ինչպես 18-րդ դարում հայ հասարակական կյանքում որոշակիորեն եղել է սուր դասակարգային պայքար, ներքին շահագործում, կեղեքում և որ, սոցիալական պայքարը այդ թվականներին հիմնական ու առանցքային հարց է եղել հայ իրականության մեջ։ Ներքնը, հենվելով մարքսիզմի կլասիկների բազմաթիվ դրույթների վրա, ցույց տվեցին, թե ազատագրական շարժումների նկատմամբ ինչ դիրք են բռնել տարբեր դասակարգեր և այդ դասակարգերի շահերը պաշտպանող հասարակական տարբեր հոսանքները։ Շ. Շահամիրյանի և նրա ընկերների ամբողջ քաղաքական գործունեությունը ցայտուն կերպով իր արտահայտությունն է գտել նրանց հրատարակություններում («Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», «Որոգայթ փառաց», «Նշավակ»)։ Դրանք ուղղված են եղել միապետական կարգերի, ֆեոդալիզմի դեմ, ճայդրանով էլ պրոգրեսիվ են, սակայն հակագիտական տեսակետ է դեմոկրատական համարել մի այն-

սլիսի խմբակի գործունեությունը, որի նպատակն է եղել բուրժուական կոնստիտուցիոն ռեսպուբլիկան, որն իր ընտրական օրենքներում չի բացասում դուլբսյին ցենզը, երկաստիճան ընտրությունը, հոգևորական դասին տալիս է առանձնաշնորհ իրավունքներ և այլն։ Մադրասի խմբակի մասին գրող սովետական պատմաբանները մոռացության են տվել մի հանգամանք, այդ խմբի գաղափարախոսության մեջ նացիոնալիզմի որոշակի արտահայտությունը, որի հիմքում ընկած է ծովից ծով Հայաստան ստեղծելու ձգտումը, նացիոնալիզմ, որը սահմանափակում է ոչ հայ ընակչության իրավունքները։

Դիսկուսիան կազմակերպողները՝ վիցե պրեզիդենտ ընկ. Մ. Ներսիսյանը, բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար ընկ. Ա. Հովհաննիսյանը և սեկտորի վարիչ պրոֆ. Պարսամյանը մեծ կրքոտությամբ քննադատելով միմյանց, գրեթե լռում էին իրենց սեփական սխալների մասին, իսկ դիսկուսիայի վերջում նրանք, կարծիքների ազատ փոխանակումը, դիտական վեճը փոխարինեցին քաղքենիական վիրավորանքների, որը դիսկուսիայի մասնակիցների մեջ առաջացրեց իրավացի անբավականություն։

Այս դիսկուսիայում չբացահայտվեցին բուրժուա-նացիոնալիստական այն լուրջ սխալները, որ թույլ է տվել պրոֆ. Ա. Հովհաննիսյանը իր «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին և «Հովսեփ Էմին» աշխատություններում։

Երկրորդ դիսկուսիան նվիրված էր հետևյալ հարցին. «Սխալ կոնցեպցիաներ 19-րդ դարի 50–60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատներին և բուրժուական լիբերալներին գնահատելու դրդումներ։ Այդ հարցի մասին զեկուցեց պրոֆ. Մ. Մկրյանը։

Հայտնի է, որ բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը առավել ջանասիրությամբ խեղաթյուրել ու աղավաղել է 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ հասարակական հոսանքների պայքարը, ամեն կերպ փորձել է գերագնահատել լիբերալիզմի դերը հայ իրականության մեջ, անտեսելով դեմոկրատական հոսանքի գոյությունը։

Պրոֆ. Մկրյանն իր զեկուցման սկզբում խոսեց «միասնական հոսանքի» բուրժուանացիոնալիստական էության մասին։ Նա կանգ առավ լիբերալ պատմագրության, հատկապես Լեոյի հակագիտական կոնցեպցիաների վրա, կոնցեպցիաներ, որոնք իրենց ազդեցությունն են թողել որոշ պատմաբանների ու գրականագետների վրա։

Լեոն իր պատմագիտական և գրականագիտական աշխատություններում նենգափոխելով և աղավաղելով փաստերը, ամեն կերպ փորձել է 19-րդ դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի ստեղծած առաջավոր ամբողջ կուլտուրան վերագրել հայ բուրժուազիային։ Նա 50–60-ական թվականների հայ լիբերալիզմի պարագլուխ Ստ. Նազարյանցին նվիրել է երկու հատորանոց մի ներբող, իսկ 70—80-ական թվականների բուրժուա-նացիոնալիստական շարժման պարագլուխ Գր. Արծրունունը՝ երեք հատորանոց մի ներբող։ Այդ աշխատություններից առաջինի մեջ խեղաթյուրված է հատկապես 50—60-ական թվականների հայ հասարակական հոսանքների պայքարի պատմությունը։ «Հյուսիսափայլ»-ի հրատարակման հետ կապված կուլտուրական ամբողջ շարժումը, որը ըստ էության արդյունք է Մ. Նալբանդյանի գլխավորած ռևոլյուցիոն դեմոկրատական հոսանքի ջանքերի և սերտ կերպով կապված է ռուս առաջավոր կուլտուրայի հետ, մասնավորապես «Սովրեմեննիկ»-ի ռևոլյուցիոն դեմոկրատական գաղափարախոսության հետ, Լեոն վերագրել է Ստ. Նազարյանցին, ժխտելով դեմոկրատական հոսանքի մասնակցությունը այդ գործում։

Բուրժուա-նացիոնալիստական այս արատավոր կոնցեպցիան մեր օրերում որդեգրվեց սպեցիֆիկյան պատմագրության և գրականագիտության կողմից։ Սպեցիֆիկները, մարքսիստական ֆրազեոլոգիայով սրոգելով իրենց հակապատմական և հակագիտական տեսակետները, փորձել են ամեն կերպ նսեմացնել ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի դերը հայ հասարակական կյանքում, ձգտելով ապացուցել, որ հայ իրականության մեջ հող չի եղել ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի համար։ Իրենց այդ ֆաշիստական տեսակետը հիմնավորելու համար, նրանք ժխտել են Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատիզմը, դուրս բերել նրան որպես մի լիբերալ ռեֆորմիստ։ Այդպես է վարվել Ա. Հովհաննիսյանը Մ. Նալբանդյանին նվիրված իր աշխատություններում։

Նույն այդ հակագիտական, արատավոր տեսակետն է զարգացրել պրոֆ. Վ. Ռըշտունին իր «Հայ հասարակական հոսանքները և 1861—64—70 թվականների գյուղացիական ռեֆորմը» աշխատության մեջ, որտեղ նա, աղավաղելով պատմական փաստերը, Մ. Նալբանդյանի պայքարը ամեն կերպ աշխատում է կտրել Գ. Չերնիշևսկու ռևոլյուցիոն-դեմոկրատական պայքարից և կապել լիբերալների ռեֆորմիստական պայքարի հետ։

«Միասնական հոսանքի» բուրժուա-նացիոնալիստական հոսանքին տուրք է տվել ընկ. Ա. Սարգսյանը «Հայ գրականության պատմություն» դասագրքում՝ 50—60-ական թվականներին նվիրված ներածական հոդվածում։

Ա. Սարգսյանը աշխատել է ամեն կերպ նվազեցնել գաղափարական այն խորը տարբերությունը, որ եղել է ոևոլյուցիոն-դեմոկրատ մտածող Մ. Նալբանդյանի և բուրժուական լիբերալ Ստ. Նազարյանցի միջև։

Ընկեր Սարգսյանը ոչ միայն չի բացահայտել Ստ. Նազարյանցի աշխարհայացքի ռեակցիոն կողմերը, Նազարյանցի և Նալբանդյանի աշխարհայացքային տարբերությունները, այլև Նազարյանցին է վերագրել Մ. Նալբանդյանի ջանքերով «Հյուսիսափայլ»-ում սկսված գրական պրոգրեսիվ շարժումը, մի բան, որ նույնությամբ զլիս է լիբերալ լեոյից։

Նույն բանը տեսնում ենք Մ. Նալբանդյանի երկերի գիտական հրատարակության կոմենտարներում, որտեղ որոշակի նկատելի է նացիոնալիստական կոնցեպցիայի ազդեցությունը, որտեղ կոմենտարներ գրողները ամեն կերպ ձգտել են Նալբանդյանի վրա տեսնել Նազարյանցի գաղափարական ազդեցությունը, ձգտել են համոզել, որ մի շարք հարցերում նրանց միջև տարաձայնություն չի եղել։

Պրոֆ. Ռուսեթ Հովհաննիսյանը իր «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի դնահատմամբ» աշխատությունում հետևելով լիբերալ պատմագրության տրադիցիաներին, Ստ. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի դերը հասարակական կյանքում հավասարաչափ համարել է պրոգրեսիվ։

«Միասնական հոսանքի» կոնցեպցիային տուրք է տվել ընկ. Ա. Ոսկերչյանը «Հայ գրականության պատմություն» դասագրքի մասին գրած իր հոդվածում («Սովետական գրականություն և արվեստ», 1951 թ., № 5), որտեղ նա ընդհանրապես թերագնահատել է հայ դեմոկրատ գրողներին, դերագնահատել լիբերալ հեղինակներին, ըստ որում Ռ. Պատկանյանի և Բաֆֆու ստեղծագործությունների էական կողմը համարել է հայրենասիրությունը և ոչ թե նացիոնալիզմը։

Պրոֆ. Մ. Մկրյանի դեկուցումից հետո բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին մի շարք ընկերներ, ինչպես ընկ. ընկ. Ա. Ինճիկյանը, Ա. Ոսկերչյանը, Ս. Բազյանը, Վ. Պարսամյանը, Վ. Ռշտունին, Հ. Մելիքյանը, Ա. Կարինյանը, Հ. Մամիկոնյանը, Դր. Գրիգորյանը, Գ. Ստեփանյանը, Է. Թոփչյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Զուրաբյանը, Գ. Սահակյանը, ընդամենը 14 մարդ։

Զեկուցող պրոֆ. Մ. Մկրյանը և ելույթ ունեցող ընկերները՝ բացահայտելով վերոհիշյալ և այլ մարդկանց ստեղծագործություններում տեղ գտած բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» արտահայտությունները, կոնկրետ փաստերի խորը անալիզով հիմնավորում էին, որ հայ իրականության մեջ կղերա-ֆեոդալական հոսանքի և լիբերալիզմի միջև մղվող պայքարը՝ պայքար էր տիրապետող դասակարգերի ներսում և չէր շոշափում որևէ արմատական, սոցիալական հարց։ Այդ երկու հոսանքները նույն շահագործող դասակարգի գիրքերից օրինականացնում էին միապետական կարգերի գոյությունը, աշխատավորական մասսաների շահագործումը։ Հայ իրականության մեջ միակ պրոգրեսիվ հոսանքը եղել է դեմոկրատական հոսանքը, որը միաժամանակ սկզբունքային ու շեշտակի պայքար է մղել լիբերալ և կղերա-ֆեոդալական հոսանքների դեմ, հոսանքներ, որոնք ըստ էության այդ էպոխայի համար բնորոշ բոլոր հարցերում (վերաբերմունք դեպի ինքնակալական կարգերը, ճորտերի ազատագրությունը և այլն), նույն սկզբունքներն էին դավանում և հանդիսանում էին ցարիզմի ու սուլթանիզմի հենարանները հայ իրականության մեջ։

Ընկեր Ստալինը «Մարքսիզմը և ազգային զազուքային հարցը» աշխատության մեջ սովորեցնում է, որ ճնշված ազգի, ամեն կողմից նեղված բուրժուազիան հայրենի ներքնախավերին է դիմում և սկսում է ազազակել հայրենիքի մասին, իր սեփական դործը հրամցնելով համաժողովրդական դործի տեղ։

Ընկեր Ստալինի այս ցուցումը հիմք ընդունելով, դիսկուսիայի մասնակիցները ցույց տվեցին պատմական այն դերը, որ կատարել են հայ լիբերալները 19-րդ դարի 50—60-ական թվականներին Ստեփաննոս Նազարյանցի դլխավորությամբ։ Ցույց տրվեց, որ այն ամբողջ պրոդրեսիվը, որ կատարվել է այդ ասպնամյակներում, կապվում է ոչ թե Նազարյանցի դլխավորած լիբերալ հոսանքի հետ, այլ Նալբանդյանի դլխավորած դեմոկրատական և ոևոլյուցիոն դեմոկրատական հոսանքի հետ։

Հայ լիբերալիզմի դերի գերագնահատումը որոշ գրականագետների կողմից, չի սահմանափակվել միայն Ստ. Նազարյանցի գերագնահատմամբ։ Դրա արտահայտություններն են նաև Ռ. Պատկանյանի, Բաֆֆու, Գր. Արծրունու, Մ. Մամուրյանի, Գ. Կոստանդյանի և ուրիշների սխալ ընութագրումները, նրանց աշխարհայացքի ռեակցիոն կողմերի սքողումը, նրանց բուրժուական նացիոնալիզմի և ազգային սնապարծության անտեսումը, որ նկատելի է ինչպես հայ գրականության պատմության դասագրքում, այնպես էլ այլ գիտական աշխատություններում։ Այս փաստերի հիմնավորմանն էին նվիրված դիսկուսիայի մասնակիցներից ընկ. ընկ. Ս. Բազյանի, Գ. Ստեփանյանի, Վ. Պարտիզունու, Գր. Գրիգորյանի, Գ. Սահակյանի և ուրիշների ելույթները։ Դիսկուսիան որոշ չափով հստակություն մտցրեց բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության ներկայացուցիչներ Ռ. Պատկանյանի, Բաֆֆու և ուրիշների աշխարհայացքի գնահատման մեջ։ Ցույց տրվեց, որ բանաստեղծ Ռ. Պատկանյանի ստեղծագործության բուրժուական նացիոնալիստական բովանդակության սքողումը և այն հայրենասիրություն ներկայացնելը, նույնպես արդյունք է «միասնական հոսանքի» ազդեցության։

Նազարյանցի և Նալբանդյանի փոխհարաբերության մասին գրող մարդկանց հաճախ մոլորեցրել է այն փաստը, որ Նալբանդյանը աշխատակցել է Նազարյանցի խմբագրած «Հյուսիսափայլ»-ին։ Դիսկուսիային մասնակցողները բազմաթիվ փաստերով ցույց տվեցին, որ այդ արտաքին կողմը ամենևին չի փոխում Նալբանդյանի և Նազարյանցի աշխարհայացքի խորը դասակարգային տարբերությունը, որ հենց «Հյուսիսափայլ»-ի ներսում առկա է եղել տարբեր հասարակական հոսանքների պայքարը։

Դիսկուսիան որոշ չափով պարզություն մտցրեց ազգային ազատագրական շարժումների գնահատման մեջ։ Սովետական որոշ պատմաբաններ ու գրականագետներ հենվելով լիբերալ բանասիրության կոնցեպցիաների վրա, սխալ կերպով պնդել են, որ 19-րդ դարի հայ հասարակական կյանքում հիմնականը եղել է ազգային ազատագրական շարժումը։ Դիսկուսիայում ելույթ ունեցող ընկերները փաստերով հիմնավորեցին, որ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի գործունեության հիմքում ընկած էր սոցիալական դասակարգային պայքարը, որի հետ սերտ կերպով կապված էր ազգային ազատագրական շարժումը։

Չնայած որոշ հաջողություններին, գրականագիտության գծով կազմակերպված այս դիսկուսիան ուներ լուրջ թերություններ։

Դիսկուսիայի ամենամեծ թերությունն այն էր, որ լիովին չկարողացավ բացահայտել սովետական պատմագրության և գրականագիտության ընդգավառում տեղ գտած իդեոլոգիական սխալների, բուրժուա-նացիոնալիստական կոնցեպցիայի արմատները մեր պայմաններում։ Այսպես, շատ տարօրինակ էր, որ և՛ զեկուցող պրոֆ. Մ. Մկրյանը և՛ ելույթ ունեցողները նշեցին բուրժուա-նացիոնալիստական բազմաթիվ սխալներ մեր ավագ և կրտսեր մի շարք գիտաշխատողների երկերում, հիշվեցին համեմատաբար երիտասարդ աշխատողներ, որոնց մոտ նման սխալները պարզ սայթաքումներ են, բայց, կանգ չառան «միասնական հոսանքի» կոնցեպցիայի այնպիսի մի պաշտպանի սխալների վրա, ինչպիսին է պրոֆ. Ա. Տերտերյանը, որն իր մի շարք աշխատություններում անտեսել է լիբերալիզմի և դեմոկրատիզմի տարբերությունը, իսկ շատ հաճախ նույնացրել է դրանք։

Այս դիսկուսիայի մյուս թերությունն այն էր, որ չնայած վերնագրված էր «Սխալ կոնցեպցիաներ 19-րդ դարի 50—60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատներին և բուրժուական լիբերալներին գնահատելու գործում» և ուներ շատ ավելի մեծ ընդգրկում, սակայն, թե զեկուցողը և թե ելույթ ունեցողները, իրավացիորեն առանցքային հարց դարձնելով Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի փոխհարաբերության հարցը, «Հյուսիսափայլ»-ում նրանց կատարած դերի գնահատումը, համարյա մոռացության տվեցին 50—60-ական թվականների համար տիպական շատ հարցեր՝ կապված ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի և լիբերալիզմի միջև մղված պայքարի հետ։ Անբավարար լուսաբանվեց ազգային ազատագրական պայքարում այդ երկու հոսանքների մասնակցությունը, 50—60-ական թվականների պարբերական մամուլի գնահատման հարցը և այլն։ Որոշ մարդիկ փոխանակ նման հարցերի պարզաբանումով օգնելու դիսկուսիային, իրենց ելույթներում աշխատեցին վերակենդանացնել սպեցիֆիկյան այն տեսակետը, թե հայ իրականության մեջ ռևոլյուցիոն դեմոկրատիզմի համար հող չի եղել, թե Միքայել Նալբանդյանը եղակի դեմք է եղել՝ դուրկ որևէ սոցիալական բազայից։ Այս սխալ տեսակետը պաշտպանեց գրականագետ Ա. Կարինյանը։

Այդ նույն բանը շատ ավելի բացահայտ արտահայտեց պրոֆ. Վ. Ռշտունին իր ելույթում։ Նա աղավաղելով պատմական փաստերը, ամեն կերպ ճգնեց «հիմնավորել» իր հին ու մերժելի տեսակետները, այն մասին, որ իբր թե Նալբանդյանը հիմնական հարցում՝ ազրարային հարցում ոչ թե պաշտպանել է Չերնիշևսկու՝ կացնի դիմելու տեսությունը, այլ լիբերալների ռեֆորմիստական տեսակետը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 16-րդ համագումարում մերկացված այս բուրժուա-նացիոնալիստական տեսակետները, որոնք դալիս են սպեցիֆիկյան ակունքներից, ջախջախիչ հակահարված ստացան հանդես եկող գրականագետների կողմից, որոնք հիմնավորված փաստերով բացահայտեցին այդ հակագիտական կոնցեպցիայի ողջ անանկությունը և ցույց տվին, որ վերոհիշյալ փաստարկումները ոչինչ չունեն մարքսիզմի հետ և հետապնդում են մի նպատակ՝ վերակենդանացնել բուրժուա-նացիոնալիստական սպեցիֆիկյան մաշված տեսակետը հայ իրականության մեջ առհասարակ ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման ժխտման վերաբերյալ։

ՍՄԿՊ-ի 19-րդ համագումարում ՀԿՊ-ի կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանն ասաց. «Որոշ հեղինակներ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը դիտում են դասակարգային պայքարից դուրս, ռևոլյուցիոն-դեմոկրատներ, ազգային հերոսներ հայտարարելով ցարիզմի դեմ մղված պայքարի բոլոր մասնակիցներին, այդ թվում բուրժուական լիբերալներին և բուրժուական նացիոնալիստներին»։

Ահա այս լուրջ և կարևոր հարցերի պարզաբանման, մեր պատմագրության և գրականագիտության ընդավառում գոյություն ունեցող սխալների, բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» դրսևորումների բացահայտման նպատակն էր հետապնդում Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած երրորդ դիսկուսիան, նվիրված 19-րդ դարի երկրորդ կեսի հայ ազգային ազատագրական շարժումներին, որի մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտ ընկ. Մ. Ներսիսյանը։ Դժբախտաբար շատ պատասխանատու գործի նկատմամբ ցուցաբերված անպատասխանատու վերաբերմունքը թե դիսկուսիան կազմակերպողների և թե զեկուցողի կողմից, հնարավոր չդարձրեց որևէ արդյունքի հասնելու։ Ընկ Մ. Ներսիսյանի հապճեպ կազմած, ընդհանուր բնույթ կրող զեկուցումը, որտեղ նկատելի էր սուր հարցերի կողքով անցնելու միտում, դիսկուսիայի մասնակիցների կողմից ընդունվեց իրավացի դժգոհությամբ և աշխույժ մտքերի փոխանակություն չառաջացրեց։ Թվում էր, որ այդ դիսկուսիան հարմար առիթ էր, որպեսզի ընկ. Մ. Ներսիսյանը հանդես գար և՛ իր սեփական սխալների համարձակ քննադատությամբ և թե ուրիշների սխալների բացահայտմամբ։ Մինչդեռ ընկ. Ներսիսյանը բռնեց սխալներից խուսս տալու ոչ օգտակար ուղին։ Որոշ պատմաբաններ, ինչպես պրոֆ. Է. Պարսամյանը և ուրիշներ, որոնց թույլ տված լուրջ սխալները քննադատվեցին մամուլում և Ակադեմիայի դիսկուսիաներում, հետևելով զեկուցողին, միաժամանակ չունենալով սեփական սխալներ խոստովանելու արիություն, դնրադասեցին լուռ մնալ, չմասնակցել մտքերի փոխանակությանը։ Եվ այդ պատճառով էլ վիճելի հարցերը ոչ միայն չպարզաբանվեցին, սխալները չբացահայտվեցին, այլ, կարելի է ասել ավելի խճճվեցին և վերոհիշյալ դիսկուսիան չարդարացրեց իրեն։

Անհամեմատ ավելի լավ էր նախապատրաստված և իրեն արդարացրեց Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած չորրորդ դիսկուսիան, որը տեղի ունեցավ 1953 թ. հունվարի 22—23-ին և նվիրված էր հետևյալ թեմային. «Ազգային-ազատագրական ու ռևոլյուցիոն շարժումները և բուրժուական նացիոնալիստական հոսանքներն ու պարտիաները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին»։ Զեկուցեց դոցենտ. Վ. Ավետիսյանը։

Զեկուցողը, խոսելով հայ ազգության ձևավորմանը դուրընթաց 19-րդ դարի կեսերից սկսվող հայ ազգային ազատագրական շարժումների մասին, ասաց, որ այդ շարժումները իրենց դասակարգային էությամբ լինելով բուրժուական, չեն հետապնդել ռևոլյուցիոն նպատակ։ Հայ բուրժուազիան իր դասակարգային շահերի համար, օգտագործելով սուլթանական Թյուրքիայի լծի տակ տառապող հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, հրահրում էր այդ շարժումները, և չլինելով ռևոլյուցիոն դասակարգ, առաջադրում էր եվրոպական կապիտալիստական պետությունների օգնությամբ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու ծրագիր։ Հայ բուրժուազիան խարում էր մասսաներին, նացիոնալիզմով թունավորում նրանց, ձգտում էր ազգային պայքարի լոզի տակ թուլացնել, կասեցնել աշխատավոր ժողովրդի դասակարգային, սոցիալական պայքարը։

19-րդ դարի 60-ական թվականներից աշխատավոր ժողովրդի շահերի միակ պաշտպանը հայ իրականության մեջ եղել է ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքը, որը ռուս մեծ մտածող Ն. Դ. Չերնիշևսկու աշակերտ ու զինակից Մ. Նալբանդյանի գլխավորությամբ, ծրագրված պայքար է մղել երկու ճակատով՝ հայ լիբերալիզմի և կղերա-պահպանողական հոսանքի դեմ։

Հակառակ բուրժուական լիբերալների դավաճանական քաղաքականությանը, լիբերալներ, որոնք իրենց դասակարգային շահերից ելնելով, հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում էին եվրոպական դաղութարարների Արևելք ներթափանցելու ծրագրի հետ, ռեոլյուցիոն-դեմոկրատները, արտահայտելով աշխատավորական լայն դանգվածների ցանկությունները, ձգտում էին հայ ժողովրդի բախտը կապել ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ։ Ռուսաստանում հասունացող գյուղացիական ռևոլյուցիոն շարժման հետ։

19-րդ դարի 70—80-ական թվականներին է՛լ ավելի է ակտիվանում հայ ազգային շարժումը՝ կապված մասնավորապես 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի հետ։ Հայ բուրժուազիան և նրա իդեոլոգները՝ Արծրունին, Ռաֆֆին, Պատկանյանը և ուրիշները՝ հայկական հարցում արևմտաեվրոպական պետությունների միջամտությունը արագացնելու նպատակով, առաջադրում են գինված հրոսակախմբերի միջոցով պայքար կազմակերպելու ծրագիր։ Այդ ծրագիրը թմբկահարվում է «Մշակ» թերթում, Ռաֆֆու, Պատկանյանի և ուրիշ նացիոնալիստ գրողների ստեղծագործություններում։ Այդ պրոպագանդայի հողի վրա ստեղծվում են մի շարք բուրժուական-նացիոնալիստական խմբակներ, ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, որոնցից հետագայում կազմվում են ռեակցիոն հակաժողովրդական բուրժուա-նացիոնալիստական արմենականների, հնչակյանների և դաշնակների պարտիաները։

Բուրժուա-նացիոնալիստների այդ հակաժողովրդական գործունեության դեմ շեշտակի պայքար են մղում ժողովրդական լայն մասսաների ձգտումներն արտահայտող դեմոկրատական հոսանքին պատկանող գրողները։ Պ. Պռոշյանը, Դ. Սունդուկյանը և Հ. Պարոնյանը և ուրիշները դառնում են դեմոկրատական այդ պայքարի ոգեշնչողները և իրենց ստեղծագործություններում փչելով լիբերալ իլյուզիաները, ազգային ազատագրական շարժման բուրժուա-նացիոնալիստական ծրագրին հակադրում են հայ ժողովրդի տնտեսական, սոցիալական պայքարի անհրաժեշտությունը։

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ սկսվում է նոր էտապ՝ կապված Ռուսաստանում բանվորական ռևոլյուցիոն շարժման ծավալման և բանվորական ինքնուրույն մարքսիստական պարտիայի ստեղծման հետ։

Անդրկովկասում, ընկեր Ստալինի ղեկավարությամբ ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք գլխավորում են բանվոր դասակարգի քաղաքական պայքարը ցարիզմի և բուրժուազիայի դեմ։ Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ են ստեղծվում նաև Հայաստանում։ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի ղեկավարությունն իր ձեռքն է վերցնում մեծ առաջնորդ ընկեր Ստալինը։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու խմբերը պրոլետարիատի դասակարգային պայքարի թեորիային հակադրում են ազգի համերաշխության, ազգային ազատագրական շարժման մեջ «միասնական հոսանքի» բուրժուական թեորիան, պայքարելով տարբեր ազգերի աշխատավորների համերաշխության դեմ, նրանք ձգտում են անջատել հայ պրոլետարիատին և գյուղացիությանը ռուս պրոլետարիատից, համառուսաստանյան ռևոլյուցիոն շարժումներից և նրա բախտը կապել արևմտա-եվրոպական իմպերիալիստական շրջանների հետ։

Հայաստանի բոլշևիկները ընկեր Ստալինի և նրա մերձավորագույն զինակիցներ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Անաստաս Միկոյանի ղեկավարությամբ, անողոք պայքար են ծավալում բուրժուա-նացիոնալիստական բոլոր պարտիաների և իդեոլոգիաների դեմ, բուրժուական նացիոնալիզմին հակադրելով պրոլետարական ինտերնացիոնալիզմը, բոլոր ազգերի աշխատավորների համերաշխությունը, ազգային միջնորմների ոչնչացումը։ Բոլշևիկները հայ ժողովրդի ազատագրական շարժումը կապում են ռուս պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժման հետ, պրոլետարական ռևոլյուցիայի հետ, որը միայն

կարող էր բերել և իրոք բերեց հայ ժողովրդին և Ռուսաստանի մյուս ժողովուրդներին թե սոցիալական և թե ազգային ազատագրություն։

Իր զեկուցման երկրորդ մասում ընկ. Վ. Ավետիսյանը մանրամասնորեն կանգ առավ մեթոդոլոգիական քաղաքական այն սխալների վրա, որ թույլ են տվել սովետահայ մի շարք գիտնականներ իրենց ստեղծագործություններում։

Որոշ պատմաբաններ, գրականագետներ, փիլիսոփաներ թույլ դնված լինելով մարքսիստական-լենինյան թեորիայով, չգիտելով հայ հասարակական կյանքի պատմությունը իր պատմական զարգացման մեջ, հայ հասարակական հոսանքների, քաղաքական պարտիաների մասին գրելիս, անքննադատ օգտագործում են բուրժուա-նացիոնալիստական պատմագրությունը, տուրք տալով «միասնական հոսանքի» արատավոր կոնցեպցիային։ Այդ ընկերները իրենց աշխատություններում անտեսելով դասակարգային սոցիալական պայքարը, հաճախ 19-րդ դարի բոլոր հարցերը հանգեցնում են ազգային-ազատագրական շարժմանը, փորձում են իդեալականացնել այդ շարժումները, կոծկել նրանց բուրժուական էությունը, բուրժուական լիբերալ գրողներին, հրապարակախոսներին ներկայացնելով որպես դեմոկրատներ։

Ընկեր Ավետիսյանը կանգ առավ պրոֆեսորներ Վ. Պարսամյանի, Վ. Ռշտունու, Մ. Ներսիսյանի, Ա. Տերտերյանի և ուրիշների թույլ տված սխալների վրա, ցույց տալով, որ բուրժուա-նացիոնալիստական այսպես կոչված «միասնական հոսանքի» կոնցեպցիան որոշակի կերպով նկատելի է նրանց մի շարք աշխատություններում։

Ընկեր Ավետիսյանի զեկուցումը առաջացրեց մտքերի աշխույժ փոխանակություն։ Քննարկվող հարցի շուրջ արտահայտվեցին ընկ. ընկ. Մ. Ներսիսյանը, Ա. Հակոբյանը. Վ. Պարսամյանը, Ռ. Հովհաննիսյանը, Մ. Մկրյանը, Հ. Գասպարյանը, Վ. Ռշտունին, Գ. Սահակյանը, Բ. Օհանջանյանը, Վ. Ոսկանյանը, Ե. Խալեյանը, Հ. Կարապետյանը, Մ. Ազայանը, Ար. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Ղարիբջանյանը, Հ. Մամիկոնյանը և Մ. Արզումանյանը։

Ելույթ ունեցող ընկերները, արտահայտելով իրենց կարծիքները քննարկվող հարցերի շուրջը, բացահայտեցին հակագիտական, բուրժուա-նացիոնալիստական այն սխալները, որ տեղ են գտել առանձին գիտնականների աշխատություններում։

Դիսպուտում իրենց սխալների քննադատությամբ հանդես եկան պրոֆեսորներ Մ. Ներսիսյանը, Ար. Հովհաննիսյանը, Վ. Պարսամյանը, Վ. Ռշտունին, ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Ոսկերչյանը և ուրիշները։

Պրոֆ. Մ. Ներսիսյանը լիովին ընդունեց կենտրոնական մամուլում և դիսպուտում իր աշխատությունների վերաբերյալ եղած քննադատությունը։ Նա ասաց, որ իր «Անդրկովկասի նարոդնիկական կազմակերպությունները 1870—1880 թթ.» գրքում (1940 թ.) և «Հայ ազգային ազատագրական շարժումը 1850—1880 թթ.» դիսերտացիոն աշխատությունում թույլ է տվել մեթոդոլոգիական լուրջ սխալներ, տուրք տալով «միասնական հոսանքի» բուրժուա-նացիոնալիստական թեորիայի վնասակար կոնցեպցիային։

Պրոֆ. Ներսիսյանը ասաց նաև, որ ինքը բուրժուա-նացիոնալիստական պատմագրության տրադիցիաները չի կարողացել լիովին հաղթահարել և անհրաժեշտ խորությամբ բացահայտել հայ ազգային ազատագրական շարժման սոցիալ-դասակարգային հիմքերը, նա իր առանձին աշխատություններում այդ շարժումները մեկնաբանել և գնահատել է որպես ժողովրդա-դեմոկրատական շարժումներ, մինչդեռ դրանք իրենց խնդիրներով ու բնույթով եղել են բուրժուական։

Ազգային-ազատագրական շարժումների նման սխալ գնահատականը, ինչպես ասաց պրոֆ. Մ. Ներսիսյանը, նրան ստիպել է կատարելու մյուս սխալը, այսինքն այդ շարժման բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսներին դեմոկրատներ համարելու սխալը։ Այսպես, օրինակ, նա, փոխանակ հետևողականորեն մերկացնելու Ռ. Պատկանյանի և Բաֆֆու նացիոնալիզմի ռեակցիոն էությունը, նրանց համարել է պրոգրեսիվ, դեմոկրատ գրողներ։ Այնուհետև պրոֆ. Ներսիսյանը ասաց, որ ինքը սխալ գնահատական է տվել մի շարք բուրժուա-նացիոնալիստական խմբակներին և նրանց ղեկավարներին։

Դիսկուսիայում ունեցած ելույթում իր սխալները ընդունեց նաև պրոֆ. Ա. Հովհաննիսյանը։ Նա ասաց, որ «Պրավդա»-ում իր մասին եղած քննադատությունը լիովին համապատասխանում է իրականությանը։ Իր «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» աշխատության մեջ բուրժուա-նացիոնալիստական լուրջ սխալ է թույլ տվել Ռուսաստանի նկատմամբ Անդրկովկասի ժողովուրդ-

ների վերաբերմունքը գնահատելիս։ Թե՛ իր բերած փաստաթղթերով և թե՛ այդ փաստաթղթերի մեկնաբանությամբ փաստորեն անտեսել է այն պայքարը, որ մղել է աղբրեջանական ժողովուրդը ընդդեմ թյուրքական և պարսկական բռնապետության, հանուն իր բախտը ռուս մեծ ժողովրդի հետ կապելու։

Իրենց աշխատություններում թույլ տված սխալները փորձեցին ընդունել նաև պրոֆ. պրոֆ. Վ. Պարսամյանը և Վ. Ռշտունին։

Պրոֆ. Վ. Պարսամյանն ասաց, որ ինքը սխալ է թույլ տվել իր «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Անդրկովկասում» գրքում, Հայաստանի միացումը Ռուսաստանին համարելով «չարիքներից փոքրագույնը», ըստ էության անտեսել է ճակատագրական ու բախտորոշ այն խոշոր նշանակությունը, որ ունեցավ այդ միացումը հայ ժողովրդի կյանքում, անտեսել է այն ճշմարտությունը, որ հայ աշխատավոր ժողովրդի միակ փրկությունը Ռուսաստանին միանալն էր, իր բախտը ռուս ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ կապելը։

Պրոֆ. Պարսամյանը ասաց, որ լուրջ սխալներ է թույլ տվել նաև իր «Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը» հոդվածում, որը տպագրվել է Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» 1946 թ. № 11—12-ում, որտեղ նա ըստ էության հավասարության նշան է դրել լիբերալների և դեմոկրատների միջև։ Խոստովանելով հանդերձ իր սխալները, պրոֆ. Պարսամյանը միաժամանակ կարծեք ամեն կերպ փորձում էր արդարացնել, դրանք «բացատրել» օբյեկտիվ պատճառներով։

Գրեթե նույն ձևով վարվեց պրոֆ. Ռշտունին։ Նա, փոխանակ անկեղծորեն ընդունելու, որ ինքը տուրբ տալով բուրժուական պատմագրությանը, լուրջ սխալներ է թույլ տվել Նալբանդյանի աշխարհայացքի գնահատման հարցում, Նալբանդյանին դուրս բերելով լիբերալ, փորձեց սկզբունքային այդ շատ կարևոր հարցը ներկայացնել որպես երկրորդական մի թերացում, արդյունք անճիշտ ձևակերպումների։

Դիսկուսիայի մասնակիցները իրավացիորեն քննադատեցին պրոֆ. պրոֆ. Վ. Պարսամյանին և Վ. Ռշտունուն և հայտնեցին իրենց անբավականությունը նրանց ելույթներից։ Միայն այդ բանից հետո, նրանք. վերջում հանդես եկան և հայտարարեցին, որ լիովին ու անվերապահորեն ընդունում են կենտրոնական մամուլում և դիսկուսիաներում իրենց աշխատությունների մասին եղած բոլոր քննադատությունները և կաշխատեն ուղղել դրանք գործնականում։ Դիսկուսիայում ունեցած իրենց ելույթներում ընկ. ընկ. Մ. Մկրյանը. Գ. Ստեփանյանը, Գ. Ղարիբջանյանը և ուրիշները, սուր քննադատության ենթարկեցին պրոֆ. Ա. Տերտերյանի բուրժուա-նացիոնալիստական լուրջ սխալները, որոնք տեղ են գտել նրա մի շարք աշխատություններում։

Հայտնի է, որ բուրժուա-նացիոնալիստական այսպես կոչված «միասնական հոսանքի» կոնցեպցիան է ընկած պրոֆ. Ա. Տերտերյանի վերջին տարիների մի շարք աշխատությունների հիմքում։ Պրոֆ. Տերտերյանի մոտ նկատելի է որոշակի ձգտում դեմոկրատ մկրտել բոլոր լիբերալ գրողներին, «հայրենասիրություն» համարել նրանց ստեղծագործությունների լեյտմոտիվը, ամենևին տարբերություն չդնելով բուրժուական հայրենասիրության և աշխատավորական, դեմոկրատական հայրենասիրության միջև, անտեսելով այն փաստը, որ բուրժուազիան ազմկում է հայրենասիրության մասին, երբեք էլ նկատի չունենալով աշխատավորական մասսաների դասակարգային շահագրգռվածությունը, ընդհակառակը, հայրենիքի մասին նրա ազմուկ-աղաղակի տակ թաքնված է աշխատավորների սոցիալական պայքարին վնասելու որոշակի ձգտումը։ Պրոֆ. Տերտերյանը հայրենասեր գրողներ է հռչակում այնպիսի լիբերալ գրողների. ինչպիսիք են Ալիշանը, Օտյանը և ուրիշները, առանց փորձելու տալ այս հայրենասիրության մարքսիստական սահմանումը։

Տերտերյանի մոտ «ազգ» բառը հաճախ հոլովվում է վերացականորեն, բոլոր հայերի համար։ Այսպես, նա սիրում է խոսել «ազգային հերոսական» պոեզիայի մասին, «ճշմարիտ ազգասիրության» մասին, այնպես, ինչպես կխոսեր որևէ լիբերալ։

Դիսկուսիայում սուր քննադատության ենթարկվեցին այն ընկերները, որոնք անպատասխանատու կերպով խմբագրել են մեթոդոլոգիական լուրջ սխալներ պարունակող գրքեր։ Ելույթ ունեցողները քննադատեցին ընկ. Հ. Մամիկոնյանին այն բանի համար, որ նրա խմբագրած՝ Ա. Տերտերյանի «Խաչատուր Աբովյան» գրքում տեղ են գտել «միասնական հոսանքի» թեորիայի դրսևորումները։ Քննադատվեցին նաև ընկ. ընկ. Մ. Մկրյանը, Հ. Մելիքյանը և Թոփչյանը այն բանի համար, որ նրանք խմբագրել են «Հայ գրականության պատմություն» դասագիրքը, որը, ինչպես հայտնի է, պարունակում է բուրժուա-

նացիոնալիստական լուրջ սխալներ։ Դիսկուսիայում հանդես եկող ընկերները միաժամանակ հավանություն տվեցին «Պրավդա»-ի թղթակցի հոդվածին, նվիրված վերոհիշյալ գիտնականների և այլ ընկերների թույլ տված գաղափարական սխալներին։

Ընկ. ընկ. Ա. Հակոբյանը, Հ. Կարապետյանը և ուրիշները քննադատեցին Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր»-ը (հասարակական գիտություններ), այն բանի համար, որ «Տեղեկագիր»-ը իդեոլոգիական պայքարի այս կարևոր շրջանում, չի գտնվում իր կոչման բարձրության վրա, ուղղություն չի տալիս այդ պայքարին։ «Տեղեկագրի» էջերում մոտավոր անցյալում տպագրվել են տեսական մակարդակով ցածր, քաղաքական սխալներ պարունակող հոդվածներ, տպագրվել են անգամ այնպիսի հոդվածներ, որոնք փորձել են ոչ մարքսիստական դիրքերից դիսկուսիայի առարկա դարձնել իդեալիստական-հակամարքսիստական տեսակետներ (օրինակ՝ Վ. Զալոյանի «Բաղիսի և վերնաշենքի մասին», Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ» հոդվածը՝ տպագրված «Տեղեկագրի» 1951 թ. № 7-ում)։

Թվում էր, որ այսպիսի լուրջ սխալներ թույլ տալուց հետո, խմբագրությունը լուրջ հետևություններ պիտի հաներ այնպիսի մի ժամանակ, երբ ՍՄԿՊ-ի 19-րդ համագումարը, մեր պարտիան ամենօրյա ղեկավարություն ցույց տալով պարտիական կազմակերպություններին, օգնում են նրանց՝ վերակառուցելու իրենց աշխատանքը։ Թվում էր, որ այդ բոլորից հետո «Տեղեկագիր»-ը տեսական լուրջ հոդվածներով հանդես կգար՝ բացահայտելու առանձին գիտնականների աշխատություններում տեղ գտած սխալները, ճիշտ, մարքսիստական մեկնարանում տալով քննարկվող հարցերին։

«Տեղեկագրի» խմբագրական կոլեգիան ոչ միայն չի կարողացել կատարել իր այդ պարտավորությունը, այլ, որքան էլ տարօրինակ թվա, խմբագրական աշխատանքները դրեթե մատնել է անուշադրության։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած վերոհիշյալ դիսկուսիաները ցույց տվեցին, որ իդեոլոգիական բնագավառում տեղ գտած այս լուրջ թերությունները, գաղափարական սխալները արդյունք են գիտության բնագավառում աշխատող մեր կադրերի մի մասի տեսական-գաղափարական ցածր մակարդակին, որի հետևանքով հաճախ նրանք չեն կարողանում պատմական փաստերը քննության առնել մարքսիստական դիրքերից, տուրք են տալիս մարքսիզմին խորթ իդեոլոգիաներին, մասնավորապես լիբերալ պատմագրության կոնցեպցիաներին։ Որոշ գիտաշխատողներ վատ են տիրապետում նաև իրենց մասնագիտությանը, չգիտեն պատմական փաստերը և տեղի անտեղի դիմում են երկրորդական աղբյուրների, մասնավորապես հայ լիբերալ պատմագրությանը, անքննադատ օգտագործելով այն։

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1952 թ. նոյեմբերի 28-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում կայացավ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի նիստ, որտեղ լսվեց պատմական գիտությունների թեկնածու Ս. Հակոբյանի «Հայ գյուղացիության պատմությունը 4—13-րդ դդ.» դոկտորական դիսերտացիայի հրապարակային պաշտպանությունը։

Որպես պաշտոնական օպոնենտներ հանդես եկան դոկտոր-պրոֆեսորներ Գ. Միքայելյանը, Ա. Աբրահամյանը, Վ. Զալոյանը, որոնք հանգամանորեն կանգ առան դիսերտացիայի արժանիքների ու մասնակի թերությունների վրա և միջնորդեցին գիտ. խորհրդի առաջ ընկ. Ս. Հակոբյանին շնորհելու պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Գիտական խորհուրդը, գնահատելով, ընկ. Ս. Հակոբյանի դիսերտացիայի գիտական արժանիքները և կարևորությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման գործում, դիսերտանտին շնորհեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Լ. Մ.